

ԱՐԴԻ ՄԻՋՆԱԴԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ
ՎԵՐԱԾՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայ միջնադարի համար X–XI դդ. դարձան մշակութային աննախադեպ վերելքի մի ժամանակաշրջան, երբ գիտության գրեթե բոլոր բնագավառներում և արվեստում ձեռքբերումները մեծ էին ու բազմազան, ինչը պայմանավորված էր հայկական Վերածնությամբ: Վերջինիս մասին հայագիտության մեջ առաջինը հանդես եկավ Մ. Աբեղյանը¹, որին հետևեցին Լ. Շանթը², Կ. Միքայելյանը³, Վ. Բրյուսովը⁴ և ուրիշներ⁵: Իսկ Մ. Մկրյանը, Հ. Ս. Թամրազյանը, Վ. Նալբանդյանը, Լ. Մկրտչյանը և այլք արդիականացրին այդ ուսմունքի մասին եղած մեր տեսական գիտելիքները՝ հարստացնելով հայ միջնադարագիտությունը գեղագիտական նոր պատկերացումներով: Այդ ամենի ընդհանրացումը եղավ Վ. Չալոյանի աշխատությունը⁶, որն իր ժամանակին բնորոշ գաղափարական որոշ ծայրահեղություններով հանդերձ միջնադարյան հայ մտքի լավագույն տեսական գնահատումներից մեկը դարձավ:

Վերածնություն եզրն առաջինը գործածել են իտալացիները XIII–XVI դարերի իրենց մշակույթի առնչությամբ, ինչը հետագայում տարածվեց այդ և ուշ շրջանի եվրոպական մշակույթի վրա: Ա. Լոսերը շեշտում է այն միտքը, թե Վերածնության նախնական փուլն Իտալիայում չհասավ իր տրամաբանական ավարտին⁷: Սկսվելով որևէ երկրում, որպես կանոն, այն ավարտի չի հասցվում նախաձեռնողների կողմից, իսկ ավարտը գրեթե կապ չունի սկզբնավորման հետ⁸: Ինչպես Հնադարը ներառում է Արևելքը և Արևմուտքը հավասարապես, այնպես էլ Վերածնությունը ներառում է Արևմուտքն ու Արևելքը⁹: Ն. Կոնրադն

¹ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Դ, Երևան, 1970, էջ 17-20:

² Լ. Շանթ. Ընդհանուր ակնարկ մը հայ բանահյուսության վրա, հ. 9, Բեյրութ, 1946, էջ 117-118:

³ Ե. Չարենցի անվ. գրականության և արվեստի թանգարան, Կ. Միքայելյանի ֆ. 114, թղթ. 156, էջ 19-24:

⁴ Поэзия Армении с древнейших времен до наших дней. Под ред., со вступительным очерком и примечаниями В. Я. Брюсова, Ереван, 1987, с. 43-50. Գիտնականը XIII–XVI դարերի հայ մշակույթը նմանեցնում է XIV–XVI դարերի իտալականին:

⁵ Читая Нарекаци. Ереван, 1997, с. 18.

⁶ Վ. Չալոյան. Հայկական ռենեսանս, Երևան, 1964:

⁷ А. Ф. Лосев. Эстетика Возрождения. М., 1978, с. 13-37. Իտալիայում երևույթն անվանում էին Չինկվեչենտո, Ֆրանսիայում՝ Ռենեսանս, Գերմանիայում՝ Ռեֆորմացիա:

⁸ Նույն տեղում, էջ 20-23:

⁹ Երեք հասարակարգերի՝ ստրկատիրության, ավատատիրության և կապիտալիզմի զարգացման ճանապարհին գաղափարական-մշակութային անցումները հաղթահարվում են սկզբնավորվող-տիրապետող գաղափարախոսության հակաօրոշորքը շարժումներով ու տվյալ

իրավացիորեն դրան տալիս է ընդհանրական նշանակություն¹⁰ այն տրամաբանությամբ, որ Վերածնությունը ոչ թե Եվրոպայում է սկսվել, այլ այնտեղ է իր ավարտին հասցվել: Դա պատմամշակութային մի անհրաժեշտ երևույթ է, որ գրեթե պարտադիր դիտվում է բոլոր ժողովուրդների զարգացման որևէ վճռական փուլում¹¹:

Ինչ վերաբերում է հայկական Վերածնությանը, ապա այն բնավ էլ նման չէ ո՛չ իտալական, ո՛չ էլ մյուս վերածնություններին¹²: Կարելի է հստակորեն առանձնացնել հայոց Միջնադարը և նրան շարունակող Վերածնությունը՝ որպես մշակութային տարբեր շրջափուլեր: Այդ երկու դարաշրջաններն առանձնացնելու խնդիրը տեսականորեն և գործնականում գիտականորեն լուծված է նաև մեզանում¹³: Անտեղի է մշակութային երևույթները կապել միայն կյանքի տնտեսական հիմքի հետ և ողջ գործընթացը բացատրել սոցիալական շարժառիթներով: Այդպիսի փորձերը մեր իրականության մեջ պայմանավորված են առանձին միջնադարագետների մոտեցմամբ, երբ հիմնականում սոցիալական պատճառներն են առաջնային համարվում և անտեսվում մշակութային իրողությունները¹⁴:

Տեսական առումով իրականում բուն Միջնադարի գաղափարական հիմքը դառնում է նորալատոնականությունը: Այն տարածվում և դառնում է փիլիսոփայական տիրապետող ուղղություն՝ էապես ազդելով հայ աստվածաբանական մտքի առաջընթացի վրա¹⁵ մինչև X դ.: Այդ իրողությունը չի տարածվում X վերջ – XIV դդ. մշակույթի վրա¹⁶ կամ տարածվում է որոշակի վերապահումով, քանզի այս շրջանում երևան են գալիս նոր գաղափարական տեղաշարժեր: Այսպես.

1. Կյանքում ընդունվում ու գործում են ասպետականության սկզբունքները՝ մինչև X դ. վերջը: Այդ շրջանի մեր և՛ բանահյուսությունը, և՛ գրականությունը այդպիսի շատ օրինակներ են տալիս: Հայտնի են բազմաթիվ հերոսներ, ինչպիսիք են՝ Մուշեղ Մամիկոնյանի, Արշակի, Պապի կերպարները Փավստոս Բուզանդի Պատմությունից, Վարդան Մամիկոնյանի կերպարը Եղիշեի Պատմությունից, Տրդատի, Սամվելի և այլոց կերպարները՝ Սովսես Խորենացու Պատ-

ազգային մշակույթի հնադարի վերականգնման փորձով, որն անվանում են Արևմուտքում՝ Վերածնություն, Արևելքում՝ Ազատագրում: Նախանշվում են երկու մեծ անցումային շրջան, որոնցով հնադարից անցում է կատարվում միջնադարին, այնտեղից էլ՝ նոր ժամանակներին: Հնադարի (անտիկ շրջանի) մի վերջին փուլն անցումն է ստրկատիրությունից ավատատիրությանը, իսկ ավատատիրության վերջին փուլը Վերածնությունն է (տե՛ս Н. К о н р а д. Избранные труды. Литература и театр. М., 1978, с. 7-10):

¹⁰ Н. К о н р а д. Запад и Восток. М., 1972, с. 19-21.

¹¹ Նույն տեղում, էջ 5:

¹² Մ. Ա բ է դ յ ա ն. Երկեր, հ. Դ, էջ 17-20: Նան՝ Հ. Մ. Թ ա մ ր ա զ յ ա ն. Հայ քննադատություն, հ. Բ, Երևան, 1985, էջ 25-50:

¹³ Վ. Մ ա Ֆ ա Ր յ ա ն. Գիլիկյան Հայաստանի գրականությունը, Երևան, 1990, էջ 7-91:

¹⁴ Ա. Ղ ա զ ի ն յ ա ն. Գրիգոր Նարեկացի. բանաստեղծական արվեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995, էջ 48-68:

¹⁵ Ե գ ն ի կ Կ ո ղ ր ա ց ի. Եղծ աղանդոց, Երևան, 1994, էջ 22-35:

¹⁶ Զ. Ա վ է տ ի ս յ ա ն. Նարեկացու Մատյանը, Երևան, 2005, էջ 4-15: А. Ф. Л о с е в. Նշվ. աշխ., էջ 83:

մությունից, Սմբատ Բագրատունու կերպարը՝ Սերեոսի Պատմությունից, Սանասարի, Բաղդասարի ու Դավթի կերպարները՝ մեր էպոսից: Այդ շրջանի ասպետական կերպարները բացառապես գործում են նույն սկզբունքներով՝ դուրս չգալով մշակված բարոյականության կողքի շրջանակներից¹⁷: Հայ իրականության մեջ «Կանոնք»-ը գրվեց Հովհ. Երզնկացու ձեռքով՝ մանուկ-կտրիճների միությունների կապակցությամբ¹⁸:

2. Մինչև Անանիա Նարեկացի, գործում է Աստծո էությանը ձուլվելու սկզբունքը: Սակայն X–XI դդ. սկսած առաջադրվում է շնորհով աստվածանալու նոր գաղափարը¹⁹: Պլոտինոսը գրում է. «Մեկը մնում է անփոփոխ, արարում է երկուսը, սակայն թիվն ընդհանրապես գոյանում է ըստ նրա: Այն, ինչ վեր է բոլոր գոյություններից, առավել քան մնում է մեկ...Սյուս կողմից, եթե գոյերը գոյանում են ըստ նրա, ապա ինքը բավարար է բոլոր գոյերին կյանքի կոչելու համար»²⁰: Այսինքն՝ ամեն ինչի հիմքը Միակն է՝ Արարիչը:

Այս խնդրով երկար տարիներ զբաղվել է և Հ. Հ. Թամրազյանը²¹: Նա Վերածնության դրսևորումը մեզանում պայմանավորում է ժամանակի միասնական մտածողության առկայությամբ և նարեկյան դպրոցի առաջընթացով²²: Դա կարևոր տեսակետ է: Գալով Անանիա Նարեկացուն՝ ասենք, որ նա թվերի մասին նախկին պատկերացումները փոխում է նորով: Իր «Սակս բացայայտութեան թուղց» աշխատության մեջ արարչագործ է համարում երեքը: Նման մտեցում է դրսևորում նաև Գրիգոր Նարեկացին իր «Ներբողեան ի Սուրբ Խաչն» երկում՝ գրելով.

Անուն անեղին էին Աստուած է.

¹⁷ Энциклопедический словарь, т. 27, изд. Ф. А. Брокгауз, И. А. Эфрон, СПб., 1899, 454-462.

¹⁸ Հ ո վ հ ա ն ն է ս Երզնկացի. Բանք չափաւ, աշխատասիրությամբ Ա. Սրայայանի, Երևան, 1986, էջ 6, 271: Խոսքը «Սահման և կանոնք» աշխատության (գրվել է մոտ 1280 թ.), և Հակոբ Մանկտավագին նվիրված տաղի մասին է (նույն տեղում, էջ 50-58): Պահպանվել են տեղեկություններ մանուկ-կտրիճների միությունների և նրանց համար ստեղծված՝ Հովհ. Երզնկացու «Կանոնք»-ի մասին: Մեր կարծիքով՝ այն թերևս յուրատեսակ կողքն է: Ընդհանրապես ճիշտ չէ, երբ Վերածնություն ասելով պատկերացնում են, թե դա այլևս ոչ մի կապ չունի Միջնադարի հետ, կտրված է նրանից: Մինչդեռ դա գրեթե նույն Միջնադարն է՝ գաղափարական որոշ յուրահատկություններով:

¹⁹ Մեջբերում ենք Գր. Նարեկացու Մատյանի այն հատվածը, որ օգտագործել է նաև Ա. Զաքարյանը, իսկ նրանից առաջ նշանավոր շատ հայագետներ (տե՛ս Ա. Զ ա ք ա ը յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայկական Վերածնության հարցը. – «Վասն արդարության», 2003, № 47–48, էջ 91–95):

Եւ գոր ահաւորն է կարգեմ աստանաւր,

Յիշատակ եղեալ մեծիդ երախտեաց

Աստուած իսկ լինել ընտրութեամբ շնորհին

Եւ ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ ճաշակմամբ.../ՄԲ, Գ/:

²⁰ Պ լ ո տ ի ն ո ս. Էննեադներ, Երևան, 1999, էջ 49:

²¹ Հ. Հ. Թ ա մ ը ա զ յ ա ն. 10-րդ դարի հայ բանաստեղծության փիլիսոփայական ակունքները. – «Գրականագիտական հանդես», 2005, թ. Բ, էջ 25: Նաև ն ո լ յ ն ի՝ Պոլթագորապլատոնյան թվի փիլիսոփայությունը նարեկյան դպրոցի գրական ավանդույթում. – «Աշտանակ», 1995, թ. Ա, էջ 35, Հ. Հ. Թ ա մ ը ա զ յ ա ն. Գրիգոր Նարեկացին և նորապլատոնականությունը, Երևան, 2004, էջ 120-130:

²² Ա. Ա ը ը ա հ ա մ յ ա ն. Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, էջ 237:

*Է միշտ յԷութեան յանհասութեան նոյն.
Նոյն ինքն է նման, նոյն մի եւ նոյն մի,*

Մի ուն ի յԷից անդրէն ի նոյն թիւ.

Թիւ միշտ եռակի եզեռակի փա՛ռք²³:

Հարցն այն է, որ բանաստեղծը Միակից ծնված փառաբանյալ թիվ և գաղափար է համարում եռյակը և եզեռակը: Հասկանալի է, որ ուշ շրջանի քրիստոնեական աստվածաբանության մեջ փոխվում է Միակի գաղափարը եզեռակիով: Քրիստոսն ամեն ինչով կապվում է Եռյակի ու Երրորդության հետ՝ լինելով Միակ: Ուստի անհրաժեշտություն է առաջացել Միակը վերածել եռամիակի՝ եզեռակիի: Նոր հայկազեան բառարանում միայն «եզակի»-ն է բացատրվում, որ նշանակում է Միակ, որպես՝ մի: Սակայն հասկանալի է դառնում, որ եռյակն է արարչագործության հիմքն ըստ այս նոր գաղափարական մոտեցման: Այդ դրույթը գալիս է Անանիա Նարեկացուց և արտահայտվում նրա սանի աշխարհայացքում: Գրիգոր Ճզնավորի և Անանիայի տեսական հայացքները նույնանում են: Յուրաքանչյուր թիվ բացահայտում է ինքն իրեն, իսկ երեքի հարցում նրանց կարծիքները նույնական են. «Միակդ աներկատ.....որ ոչ էր մակերևեալ, իսկ երկատ, զի երկատեցալ..... երեակ թէն յառաջնոյն աներկանց և ծայրագոյն և հոյծ և պղպշուն, սակայն ոչ բաժանի ըստ մանկանցն միայն, զի թիւ է....կատարեալ»²⁴: Նոր աշխարհատեսության մեջ արարչագործ և կատարյալ թիվ է հայտարարվում Երեքը: Գրիգոր Նարեկացին Սուրբ Խաչին նվիրված ներբողում գրում է. «Արժան լիցուք փառաւորեալ զքեզ կենսատու ի կանուխն ժամանութիւն եւ յանագանն յարաձգութիւն, ի զիծն լայնական եւ ի մակերեւութութիւն հարստական»²⁵: Նարեկացիները երեքը համարում են կատարյալ՝ ի տարբերություն մեկի, քանի որ երկրաչափական առաջին պատկերը ստացվում է երեք գծերի հատումով, ինչը պատկեր է՝ սկիզբ նոր բազմության, «ի զիծն լայնական» և «ի մակերեւութութիւն հարստական»: Երեքն ակնհայտորեն ձեռք է բերում այլ բովանդակություն, քան պլուտինոսյան թվակարգում է մտածվում:

Դա արդեն նոր գաղափարական սկզբունք է մեր իրականության մեջ²⁶: Վերանայվում է միջնադարյան մեղքի և դրա պատճառով կրելիք պատիժների ավանդական հարցը: Հիսուսը գալիս է իր անձով, իր էության մեջ եռյակը ներառած՝ փոխելու տիեզերական կարգը: Արիստակես Լաստիվերտցին և Հովհաննես Մարկավազն արդեն կարծում են, որ մեղքը չափազանցված է՝ այն բոլորի

²³ Գ Ր Ի Գ Ո Ր Ն Ա Ր Ե Կ Կ Գ Ի. Տաղեր, Երևան, 1957, էջ 90:

²⁴ Ա. Ա Ր Ր Ա Կ Կ Ա Մ Կ Ա Ն. նշվ. աշխ., էջ 238: Խոսքն Ան. Նարեկացու «Մակս բացայայտութեան թուոց»-ի մասին է:

²⁵ Նոր բարգիւրք հայկազեան լեզուի, հ. Ա, Երևան, 1979, էջ 646:

²⁶ Մ. Մ Ի Ի Թ Ա Ր Կ Ա Ն. Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմը.՝ ՊԲՀ, 2003, № 2, էջ 59-60: Գ. Մ Ա Ն Ն Կ Կ Կ Ա Ն. Արիստակես Լաստիվերցի, Երևան, 1977, էջ 39-42:

վրա տարածելու համար²⁷: Խախտված է աստվածային հավասարության սկզբունքը: Թերևս այդ էին հաստատում թոնդրակյանները, որոնց մասին Ժան-Պիեռ Մահեն գրում է, թե բնակչության ամենատարբեր խավերի մեջ՝ հասարակ գյուղացիներ, ազնվականներ, «...աստվածավախ այդ հոգիների համար չափազանց մեծ էր ինչպես նախասկզբնական արմատին դառնալու գայթակղությունը, այնպես էլ վաղ քրիստոնեական կարոտախտը»²⁸: Հոգևոր դասի մեջ ևս դրսևորվում է մտքի այն ազատությունը, որով նա հակադրում է քաղկեդոնականությանը, բայց և իրական կյանքում գնում դեպի ճշմարիտ աստվածապաշտությունը²⁹:

3. Գրիգոր Նարեկացին Վերածնության առաջին ներկայացուցիչներից մեկն է մեզանում³⁰: Նրա նախորդները՝ Անանիա Նարեկացին, Խոսրով Անձևացին և մյուսները, ըստ էության, նախավերածնության շրջանի գործիչներ են: Նա անցում է կատարում դեպի մարդու՝ իբրև անձի գիտակցումը՝ արդյունքում մեզանում ձևավորելով X–XII դդ. վաղ Վերածնությունը: Իր բանաստեղծական ուժգին պոռթկումով, խորը զգացմունքայնությամբ, անսովոր մտածողությամբ, աստվածային շնորհով իր օժտվածությամբ նա հիրավի դառնում է Վերածնության հսկաներից մեկը: Ըստ Հ. Ս. Թամրազյանի, այն XIII–XIV դդ. վերածում է Վերածնության³¹: Բյուզանդագետ Ս. Ավերինցեն ակամա հաստատում է այդ միտքը³², թեև չի ընդունում դա:

Մեզանում գիտնականներից ոմանք պնդում են, թե մեր մշակույթը չի ունեցել Վերածնություն (որպես դարաշրջան)³³: Խնդրի այդպիսի դրվածքն ամեն ինչ հանգեցնում է փակուղային իրավիճակի: Մինչդեռ հայագիտության բոլոր ոլորտների պատմության և տեսության համար ուսումնասիրության դյուրին եղանակներ են պետք: Եթե զարգացած միջնադարի մասին մեզանում կա առավել լավ մշակված մեթոդաբանական հիմք, ապա դա հենց Վերածնության տեսությունն է: «Հայաստանի համար, – գրում է Ն. Կոնրադը, –ամբողջովին իրական է և այն «դասականը», այսինքն՝ հունահռոմեականը, ինչը և բնորոշ է Բուսլիային՝ ժամանակային առումով վերածնական համարվող երևույթը, որ զարգանում է Եվրոպայում Վերածնության ժամանակի ընդհանուր շրջանակներում: Միաժամանակ Հայաստանի պատմությունն սկզբից ներսնայնապատկանում է Արևմուտքին, որքան Արևելքին»³⁴: Սա մի նկատառում է, որ հաս-

²⁷ Գ. Մ ա ն ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 38-39:

²⁸ Ա ն ն ի Մ ա հ ե և Մ ա հ ե Ն - Պ ի ե ռ Մ ա հ ե. Գրիգոր Նարեկացին և իր «Մատենանոթերգութեան» երկը, Երևան, 2005, էջ 54:

²⁹ Գ. Մ ա ն ու կ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39-42:

³⁰ Վ. Չ ա լ ո յ ա ն. Հայ փիլիսոփայության պատմություն, Երևան, 1975, էջ 369: Այս կարևոր խնդրին վերջերս իր գրքում կրկին անդրադարձել է Զ. Ավետիսյանը՝ նկատելով, որ նորալատոնական փիլիսոփայության ազդեցությունները մեծացնելիս իրականում գրկում ենք հանձարին գեղագիտական այլ համակարգերի հետ կապ ունենալուց (տե՛ս Զ. Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 11-15):

³¹ Հ. Մ. Թ ա մ Ր ա զ յ ա ն. Հայ քննադատություն, հ. Բ, Երևան, 1985, էջ 36:

³² Читая Нарекаци, с. 136-137. Ս. Ավերինցենը հայկական Վերածնության կողմնակիցը չէ:

³³ Ռ. Բ շ ի ս ա ն յ ա ն. Հայ մատենագիտության պատմություն (ուրվագիծ), հ. Ա, Երևան, 1964, էջ 37-39:

³⁴ Н. К о н р а д. Запад и Восток, с. 20.

տատվում է եվրոպացիների գիտական և գրական փորձով ու փորձառուությամբ³⁵: Արևմուտք-Արևելք կամ Արևելք-Արևմուտք փոխառնչության և առաջնայնության խնդրում ստույգ է մի բան. գերազնահատել մեկի կամ մյուսի դերը անտեղի է: Վեճը, սակայն, ոչ միայն Վերածնության, այլ նաև ազգային արժեքների վերազնահատման առումով, շատ հին ակունքներ ունի: XI դ. իմաստասեր, բանաստեղծ Գրիգոր Մագիստրոսի կարծիքը հատկանշական է ու տեղին³⁶: Նրա պատասխանը՝ ուղղված բոլոր ժամանակների հետաքրքրասերներին ու թերահավատներին, այսպիսին է. Գիրակոս հույն բժշկագետին նա գրում է, թե «զմենջ ոմանք կասկածեն յիմաստնոց ձերոց իբրու թե թարգմանեալք ի մենջ, զիա՞րդ, հզորագոյն ելով քան զմեզ»³⁷: Մի՞թե նրանք գերազանցել են մեզ: Պտղոմեոսը, թարգմանելով համաշխարհային կարևորագույն հուշարձանները, հույների մոտ ամեն ինչ չէ, որ գտավ, և թող ուրեմն նրանք չպարծենան իրենց ամենիմացությամբ: Արվում է մի եզրակացություն, որ կարծես հարցի 1000-ամյա պատասխանն է. «Բսկ մերոցն արիական արանց և առաքինասէր իմաստնոցն թուի ինձ եթէ յոյժ յաղթօղ եղեալք ամենայն արիեստից և մակացութեանց», որի պատճառով «վեհ ինձ նոցա համարիմ»³⁸: Նա խելամտորեն ու փաստերով բարձրացնում է հայ իմաստասերների դերը մարդկության մտավոր առաջընթացի մեջ:

Գտնվելով Արևմուտքի ու Արևելքի սահմանագծում, կրելով կրոնափիլիսոփայական, գրական և քաղաքական երկկողմանի ազդեցություններ՝ հայ մշակույթը հանդես է գալիս որպես ուրույն ամբողջություն³⁹: Եվ հետաքրքիր է տեսնել Վերածնության դրսևորումը նաև նրանում: Հայկական Վերածնության ամենալուրջ տեսաբանը Մ. Աբեղյանն է: Նա առաջին անգամ կատարել է իր շրջանաբաժանումները՝ համակարգելով և բնութագրելով դրանք⁴⁰: Ըստ նրա. առաջին. Նախնական առասպելապատմական բանահյուսության շրջան (հայոց Հնադար). երկրորդ. Եկեղեցաքաղաքական մաքառման գրականության շրջան (Միջնադար). երրորդ. Վերածնության գրականություն (կապիտալի նախնական կուտակման շրջան): Գիտնականը XI–XVII դդ. համարում է հայկական Վերածնության ժամանակաշրջան՝ նկատի ունենալով նրա վերելքի (XI–XV) և վայրէջքի (XV–XVII) շրջաններն ամբողջությամբ⁴¹: Վ. Չալոյանի «Հայկական ռենեսանսը»⁴² իր ժամանակի ամենահետաքրքրական աշխատություններից մեկը, ոչ միայն հայկական, այլև եվրոպական Վերածնության մասին չափազանց ուշագրավ մի ուսումնասիրություն է, որը գալիս է ամրապնդելու Մ. Աբեղյանի տեսական հիմնավորումները և էապես ընդլայնելու մեր մշակույթի ընդգրկման սահմանները: Վերածնության տեսությունը մերժող գիտնականների կարծիքով

³⁵ Э д. М е ж е л а й т и с. Армянский феномен. Ереван, 1982, с. 63-66.

³⁶ Մ. Աբեղյան. նշվ. աշխ., էջ 34:

³⁷ Գրիգոր Մագիստրոսի Թղթերը, Ալեասանդրապոլ, 1910, էջ 115: Այս և մյուս մեջբերումների ընդգծումները մերն են:

³⁸ Նույն տեղում:

³⁹ Ջ. Ավետիսյան. Մարդը Ե դարի հայ գրականության մեջ, Անթիլիաս, 1994, էջ 4:

⁴⁰ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Է, Երևան, 1975, էջ 186-197:

⁴¹ Մ. Աբեղյան. Երկեր, հ. Դ, էջ 17-32:

⁴² Վ. Չալոյան. Հայկական ռենեսանս, էջ 63-84:

իր «Հայ փիլիսոփայության պատմություն» գրքում Վ. Չալոյանը X–XIV դդ. համար այլևս չի գործածում «Վերածնություն» եզրը⁴³ ներկայացնելով դա որպես այդ գաղափարից հրաժարվելու հիմք: Սակայն հակառակ այս պնդմանը՝ գիտնականը բարեխղճորեն կատարում է հայ փիլիսոփայության պատմության հստակ շրջանաբաժանումները՝ այդ դարերը բնութագրելով որպես կապիտալի նախնական կուտակման, սոցիալական հարաբերությունների, միջնադարյան քաղաքների ու առևտրաարդյունաբերական կապիտալի զարգացման Վերածնության շրջան⁴⁴: Իրականում վերափոխվում է հայ միտքը: Մեզանում թե՛ վերին, թե՛ ստորին խավերը դրսևորում են իրենց առաջադիմական գաղափարները⁴⁵: Բացահայտելով մտավոր զարգացման սոցիալական և գաղափարական նախադրյալները՝ գիտնականն անցնում է հայկական Վերածնության քննությանը և եզրի գործածությանը⁴⁶:

Հայկական Վերածնության փաստը չընդունողները (Ա. Ղազինյան, Ս. Ավերինցև, Ա. Ջաքարյան և ուրիշներ), օգտագործելով Ն. Կոնրադի տեսությունը, քննադատում են վերջինիս հասարակական կարգերի (ֆորմացիաների) տեսության համար: Մյուս կողմից՝ դեռևս նրանից տարիներ առաջ մեզանում եղել է Վերածնության գոյության մասին տարածված կարծիք⁴⁷, և հարցը միայն Ն. Կոնրադի անձով պայմանավորելը և նրա անվան հետ կապելն արդարացի չէ: Իսկ նրա առաջադրած տեսական դրույթների մի զգալի մասը, այնուամենայնիվ, արդիական են, և հիշյալ երկու սկզբունքները կարելի է զուգադրել:

ա) 1. Մտրկատիրական – 2. ավատատիրական – 3. կապիտալիստական հասարակարգեր և համապատասխան դարաշրջաններ,

բ) 1. Հնադար – 2. Միջնադար – 3. Վերածնություն մշակութային դարաշրջաններ⁴⁸, որոնք հասարակարգերի մշակութաբանական անդրադարձն են:

Վերածնությունը չընդունողների առաջարկածը ո՛չ ֆորմացիաների, ո՛չ էլ մշակութաբանության տեսության շրջանակներում հստակորեն չի տեղավորվում: Ս. Ավերինցևը հայ գրականության գնահատումներում ելնում է այն սկզբունքից, որ Վերածնությունը զուտ եվրոպական երևույթ է: Նա ակնհայտորեն եվրոպեոստրոն տեսության կողմնակից է և Գրիգոր Նարեկացուն միաստիկ է համարում այդ պատճառով⁴⁹: Արժանահիշատակ Ա. Ղազինյանը, Գրիգոր Նարեկացու բանաստեղծական ժառանգությունը քննելիս, Վ. Չալոյանի բերած

⁴³ Ս. Ջ ա թ ա ղ յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայկական Վերածնության հարցը.– «Վասն արդարության», 2003, № 47-48, էջ 91-95:

⁴⁴ Վ. Չ ա լ ոյ ա ն. Հայ փիլիսոփայության պատմություն, էջ 269-300:

⁴⁵ Նույն տեղում, էջ 300-316:

⁴⁶ Նույն տեղում, էջ 369-392:

⁴⁷ Գ. Տ ե թ - Մ կ թ տ չ յ ա ն. Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Ա, Երևան, 1979, էջ 220:

⁴⁸ Д. Л и х а ч е в. Русское предвозрождение в истории мировой культуры. Историко-филологические исследования (сборник статей памяти академика Н. И. Конрада). М., 1974, с. 18.

⁴⁹ Читая Нарекаци, с.132-133. Մինչդեռ եվրոպական իրականության մեջ Վերածնության շրջանում հանդիպում են այնպիսի մեծություններ, որոնք խորությամբ զբաղվել են գաղտնի գիտություններով և միաժամանակ եղել են միստիկներ: Այդպիսին է Թեոֆրաստը՝ Պարացելսը (տե՛ս Փ. Գ а р т м а н. Жизнь Парацельса и сущность его учения. М., 1997, с. 19-45):

փաստերը մերժում է նրանով, որ Վերածնության համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական պայմանների զարգացումը մեզանում անբավարար է համարում՝ առաջնորդվելով ֆորմացիաների տեսությամբ⁵⁰: Ըստ Ա. Ղազինյանի՝ կապիտալիզմի զարգացման համար անհրաժեշտ նախադրյալներ Հայաստանում չկային, ինչն անհատից անձի ձևավորման նախապայմանը կլիներ: Հայկական, հունական և իտալական մշակույթները կողք կողքի ողջ հազարամյակ զարգացել են տիպաբանական համանման պայմաններում մինչև XIV դարը, և մակարդակների զգալի տարբերություններ չեն եղել: Եզրակացությունն այն է, որ այդ ժամանակ Վերածնություն չկար Արևմուտքում, հետևաբար Արևելքում ևս լինել չէր կարող: Հայաստանի X–XIV դարերի մշակույթը բնորոշվում է որպես զարգացած ավատատիրության մշակույթ⁵¹: Քննվում է նաև երկրի սոցիալ-քաղաքական ծանր վիճակի հարցը: Անտեսվում է, որ V–VII դդ. մշակույթը, օրինակ, զարգացավ պետականության կորստի և դավանաբանական սուր հալածանքների պայմաններում:

Ս. Ջաքարյանը հակված է դեպի հարցի մշակութաբանական սկզբունքը: Նրա կարծիքով՝ անցյալ դարի 40–60-ական թվականներին շրջանառության մեջ դրվեց «հայկական Վերածնության» տեսությունը⁵²: Դա մասամբ է ճիշտ: Ըստ նրա՝ Ս. Մկրյանը և Հ. Ս. Թամրազյանը ծայրահեղացնում են հարցը՝ Գր. Նարեկացուն ներկայացնելով իբրև վերածնության գործիչ, իսկ Ս. Արեղյանն էլ այդ եզրը բոլորովին այլ նշանակությամբ է գործածում⁵³: Ի՞նչ է հետևում: Այն, որ հայկական Միջնադարն սկսվում է, ամենայն հավանականությամբ, քրիստոնեության ընդունումով (IV դարի սկիզբ) և ավարտվում XVIII դարի վերջով, ուր նա դառնում է մի ընդհանրական ժամանակաշրջան, որ 15 դարերի միջով ձգվում է հայոց Հնադարից մինչև XIX դարի սկիզբ: Ստացվում է, որ V դ. պատմագրությունը, փիլիսոփայական ու աստվածաբանական միտքը, որ գտնվում էր նորպլատոնականության ազդեցության տակ (Դավիթ Անհաղթ և Անանիա Շիրակացի), աշխարհայացքային սկզբունքները չեն փոփոխվում Անանիա և Գրիգոր Նարեկացիների, Գրիգոր Մագիստրոսի, Հովհաննես Սարկավագի ու Ներսես Շնորհալու դեպքում: Իր աշխատության մեջ Ս. Ջաքարյանը, մերժելով վերածնության դրսևորումը մեր իրականության մեջ, իբրև միջնադարյան հեղինակներ է ընդունում Գր. Նարեկացուն և Հովհ. Սարկավագին⁵⁴: Եվ միջնադար ասվածն այդ դեպքում ընդգրկում է այդ ողջ ժամանակաշրջանը՝ առանց գաղափարական էական տեղաշարժերի: Տարօրինակ է, որ բանաստեղծության մեջ, արձակում, մանրանկարչության ու ճարտարապետության մեջ վիթխարի առաջընթացը բացատրվում է միջնադարյան հումանիզմի դրսևորմամբ. իսկ հումանիզմը վերածնության բովանդակությունն է (թեև եղել է բոլոր դարաշրջաններում): Միջնադարյան հումանիզմ եզրի գործածությունը դառնում է հակասա-

⁵⁰ Ա. Ղ ա զ ի ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 48-53, 66-68:

⁵¹ Նույն տեղում, էջ 73:

⁵² Ս. Ջ ա թ ա ր յ ա ն. Գրիգոր Նարեկացի և հայկական Վերածնության հարցը. «Վասն արդարության», 2003, № 46, էջ 39:

⁵³ Նույն տեղում, էջ 39-41:

⁵⁴ Ս. Ջ ա թ ա ր յ ա ն. Հայկական Վերածննդի հարցը, Երևան, 2006, էջ 131-174:

կան: Հասկանալի չէ, թե մերժելով Վերածնության տեսությունը՝ փոխարենն ի՞նչ մեթոդաբանություն է առաջարկվում. թերևս ընդամենը զարգացած միջնադար եզրի⁵⁵ գործածությունը X–XIV դդ. համար: Անշուշտ, հայ մշակույթն ունեցել է նաև իր հարուստ Միջնադարը: Այն սկսվում է քրիստոնեության Հայաստանում ընդունվելու ժամանակվանից (IV դարի սկիզբ) և հասնում մինչև X դ.⁵⁶: Դա հետաքրքիր ու բարդ մի ժամանակաշրջան է հայոց կյանքում: Այդ ժամանակահատվածում ստեղծվում են լուրջ նախադրյալներ աստվածաբանական, փիլիսոփայական և գեղագիտական բազում խղիղների պարզաբանման ու դրանք մեզանում ամրապնդելու ուղղությամբ⁵⁷:

Հայկական Միջնադարի և նրան հաջորդած Վերածնության մասին ուշագրավ վերլուծություններ կան Վ. Սաֆարյանի կիլիկյան գրականությանը նվիրված աշխատանքում: Նրանում կատարվում է Միջնադարի և Վերածնության ժամանակային սահմանազատում, իսկ այնուհետև Վերածնության տեսական ու գործնական խնդիրների քննություն: Ամենակարևորը, թերևս, այն է, որ հիմնավորվում է, թե Վերածնությունը որքան էլ առանձնանում է Միջնադարից, այնուամենայնիվ շարունակում է մնալ իբրև միջնադար՝ ընկալման լայն առումով⁵⁸: «Վերածնունդը ծնվելով Միջնադարի մեջ՝ միաժամանակ շատ բան ժառանգում է նրանից. գրում է Վ. Սաֆարյանը, – ահա թե ինչու Ռենեսանսը իր հարաբերական ինքնուրույնությամբ ներառվում է լայն առումով Միջնադարի մեջ, և պատահական չէ, որ սահմանազատումը հստակ պատկերացնելով հանդերձ, հաճախ է խոսվում Միջնադար պատմահասարակական և գրական-գաղափարական մեծ երևույթի մասին ընդհանրապես՝ նկատի ունենալով նաև նորը»⁵⁹:

Ն. Կոնրադի արևելյան Վերածնության տեսությունը, ուր կարևոր տեղ է հատկացվում նաև հայկական Վերածնությանը, իր ներքին տրամաբանվածությամբ արդիական հնչեղություն ունի⁶⁰: Նրա կարծիքով գոյություն ունեն երեք փուլեր՝ 1. Հնադար, 2. Ասպետական շրջան, 3. Վերածնություն: Վերածնությունը (վերջին փուլը) ևս պատմական անհրաժեշտություն է: Եթե մերժվում է Ն. Կոնրադի տեսությունը Վերածնության մասին, ապա պետք է այդ տրամաբանությամբ մերժվեն նախորդ երկուսը՝ Հնադարը (անտիկ շրջանը)՝ և Միջնադարը՝ որպես համընդհանուր մշակութաբանական դարաշրջաններ: Եվ եթե ոմանք վտանգ են զգում, թե Վերածնություն հասկացությունը նսեմացնում կամ

⁵⁵ Իրականում այս եզրը միջնադարի համար միայն մեզանում են գործածում:

⁵⁶ Վ. Չ ա լ ո յ ա ն. Հայ փիլիսոփայության պատմություն, էջ 40–256:

⁵⁷ Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն. Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 18–22:

⁵⁸ Վ. Ս ա ֆ ա ը յ ա ն. Գիլիկյան Հայաստանի գրականությունը, էջ 3–91: Ա. Լոսերը հստակորեն մատնանշում է, որ անտիկ պլատոնականությունը Միջնադարում վերածվում է նորպլատոնականության, իսկ Վերածնության շրջանում՝ Հունանիզմի (А. Лосев. Նշվ. աշխ., էջ 45–50):

⁵⁹ Վ. Ս ա ֆ ա ը յ ա ն. Գիլիկյան Հայաստանի գրականությունը, էջ 19:

⁶⁰ Д. Л и х а ч е в. Նշվ. աշխ., էջ 17–18: Լիխաչովը նույնպես առաձևացնում է երեք փուլ՝ 1. Հնադար (անտիկ շրջան), 2. Ասպետական շրջան և 3. Վերածնություն: Մեր կարծիքով այժմ «անտիկ» բառ-հասկացությունը, օրինակ, տարածվում է ոչ միայն հունա-հռոմեական հնադարի, այլև մյուս ժողովուրդների գարգացման նախնական ժամանակների վրա ընդհանրապես (տե՛ս նաև D o n a l d B. R e d f o r d. Egypt, Canaan and Israel in Ancient Times. New Jersey, 1992, p. 397–400):

թերևս իր մեջ կլանում է հայկական միջնադարյանը, և կամ մենք իրականում գուրկ ենք այդպիսի կարողունակությունից, ապա ինչո՞ւ է այդ դեպքում ողջ հայ մշակույթի նախաքրիստոնեական շրջանի զգալի հատվածը որակվում հելլենիստական, և բոլոր էական տեղաշարժերը զուգադրում հունա-հռոմեական մշակույթի հետ՝ մի կողմ թողնելով նրա զարգացման «ինքնուրույն ճանապարհը»: Ինչու՞ չեն ընդդիմանում այս դեպքում, երբ պետք էր այդպես վարվել:

Իսպառ անտեսվում է միջին հայերենի՝ որպես նոր աշխարհիկ լեզվի, տարածման ու լայն գործածության փաստը: Դրա առաջացման յուրահատկությունները գիտականորեն բնավ չեն քննվում, մինչդեռ դա էական փոփոխություն է: Ն. Շնորհալու, Ֆրիկի, Կ. Երզնկացու և հետագա բանաստեղծների ու պատմիչների լեզուն նախկինը չէ, և հաջորդներն այլևս վերադարձ չեն կատարում դեպի դասական գրաբար⁶¹: Սա նոր գաղափարական ու գեղագիտական համակարգ է⁶², ինչն անհնար է շրջանցել, և այն պետք է իր իսկական պատճառահետևանքային կապերի մեջ ներկայացնել ու բացատրել:

Թոնդրակյան աղանդի դերն արևելաքրիստոնեական աշխարհում և Արևելյան Եվրոպայի մշակութային կյանքում բացառիկ է: 1892 թ. Գ. Տեր-Մկրտչյանը թոնդրակեցիների մասին գրում է, թե աղանդավոր ու հակաուղղափառական հայկական մտածողության այդ միակ արտադրությունն ընդգրկեց Արևելյան Եվրոպայի մի մասը⁶³: Դա կրկին Արևելք-Արևմուտք մշակութային-կրոնական բազմադարյան փոխհարաբերությունների արտահայտություններից մեկն էր, և համեմատությունը Ռեֆորմացիայի հետ պատահական զուգադրում չէ⁶⁴: Թոնդրակյանները գաղափարական էական դեր են խաղացել նախ՝ Արևելքի մշակութային կյանքում⁶⁵, իսկ հետո՝ նաև Արևմուտքի: Ա. Հովհաննիսյանը ցույց է տալիս նրա տեղը և դերն ընդհանրապես: Մյուս կողմից՝ պետք է նշել, որ երկրի սոցիալ-քաղաքական վիճակը և մշակութային վերելքը հաճախ համարժեք ու իրարով փոխպայմանավորված չեն:

Խոսվում է X–XIV դդ. ուսցիոնալիստական գիտափիլիսոփայության մասին, և XII–XIII դդ. գնահատվում են իբրև զարգացման բարձրակետ⁶⁶: Զարգացած ավատատիրությունը և Վերածնությունը, ի վերջո, նույն միջնադարն են: Ոչ ոք չի կարող պնդել, թե Դանտե Ալիգիերիից մինչև Տորկվադո Տասսո, Պարացելու և

⁶¹ Հ. ր. Ա ճ ա ո յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 230-238: Ժամանակի կենդանի լեզվի գործածության և սուրբգրային տեքստերի թարգմանության և գործածության արգելանքի հաղթահարումը դառնում է օրինաչափ (տե՛ս Н. К о н р а д. Литература Востока в средние века. М., 1970, с. 14-15):

⁶² Մ. Հ ա յ ր ա պ է տ յ ա ն. Հայոց հին և միջնադարյան գրականության պատմություն, Անթիլիաս, 1988, էջ 294-295:

⁶³ Գ. Տ ե ր - Մ կ ր տ չ յ ա ն. նշվ. աշխ., էջ 219:

⁶⁴ Մ. Զ ա ք ա ր յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայկական Վերածնության հարցը. «Վասն արդարության», 2003, № 47-48, էջ 92-96:

⁶⁵ Ա. Հ ո Վ հ ա ն ի ս յ ա ն. Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. Ա, Երևան, 1957, էջ 387:

⁶⁶ Ն. Թ ա հ մ ի ղ յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V–XV դդ., Երևան, 1985, էջ 30-32:

հաջորդ մեծերը միջնադարյան հեղինակներ չեն, այլ միայն Վերածնության⁶⁷: Եվ հակառակը: Հետաքրքիր է, որ իտալացիները Վերածնություն հասկացությունը տարածում էին իրենց մշակույթի վրա միայն կրոնական իմաստով⁶⁸: Մակայն ավելի ուշ այդ երևույթն ընդգրկում է եվրոպական ողջ մշակույթը՝ ներառելով Ֆրանսիայից մինչև Բրիտանական կղզիներն ընկած երկրները և Եվրոպա մայրցամաքը մշակութաբանական իմաստով: Այստեղ է, որ ընդդիմախոսները պիտի կարողանան ապացուցել, թե դա սխալ է: Եվ եթե իտալացիներն իրենց դասական արժեքներն էին վերականգնում, ապա Շեքսպիրն ի՞նչ ազգային ավանդներ պետք է վերականգներ իտալացիների համար: Ելնելով արվեստի ճգնաժամային տեսության մասին իր պատկերացումներից՝ «Ն. Բերդյաևը կարծում է, որ դարաշրջանից դարաշրջան առաջընթաց ապահովելու համար ազգերը մշակութային ճգնաժամից դուրս են գալիս՝ նոր գաղափարական ուղղություն ընտրելով⁶⁹: Մեզանում այդպիսին էր X–XI դդ.: Այն հաղթահարելու ելքը Վերածնությունը եղավ:

Բյուզանդիայում XI դ. տարածված գուշակությունների, սնահավատության (աստղագուշակության, դիվագիտության, կախարդության) և արքունական սանձարձակ բարքերը բնորոշ էին X դարի Հայաստանին և XIV դարի Բուսլիային: Դա հոգևոր ոլորտում առավել ծայրահեղ հետաքրքրության և աղանդավորության դրսևորում էր⁷⁰: Թ. Պրոդրոմը (1070–1153) XII դ. սկզբում գրում է իր «Տիմերիոն» երկխոսությունը, ուր պատմվում է Տիմերիոնի՝ դեպի անդրաշխարհ կատարած ճանապարհորդության մասին: Երկու դները գողանում են նրան և տանում դժոխք: Նրա ուսուցիչը՝ Թեոդոր Սիմերնացին, կազմակերպված դատավարության ժամանակ պաշտպանում է նրան, իսկ Ասկլեպիոս և Հիպոկրատ բժիշկների ստուգումից և թույլտվությունից հետո վերադառնում երկիր⁷¹: Այնկողմնային աշխարհի մասին նման պատկերացում ունի XI դ. արաբ բանաստեղծ ալ Մահարին, որի համար աշխարհաճանաչողության առաջնային ու հիմնական միջոցը բանականությունն է⁷²: Դանտե Ալիգիերիից շատ առաջ անդրաշխարհի մասին կային այն պատկերացումները, որոնք հետագայում օգտագործվեցին իտալացիների կողմից՝ էականորեն կարևորելով բանականության դերն ամենուր (իհարկե, եգիպտական հնագույն ավանդույթը ևս հարուստ է այնկողմնային աշխարհի մասին պատկերացումներով⁷³: Ա. Ալեքսիձեն արտաբնուստ բյուզանդականը չի նմանեցնում էջքի⁷⁴ մասին անտիկ կամ քրիստո-

⁶⁷ Այս շրջանի մտածողները ազատախոհ են, հաճախ՝ ուղղակի «խռովարարներ»: Նրանք գործածում են նոր լեզու՝ հաճախ արժանանալով ժամանակակիցների արհամարհանքին, ինչպես Պարացելսը Գերմանիայում (իսկ մեզանում՝ uncia). տե՛ս Կ.-Գ. Ю н г. Феномен духа в искусстве и науке. Минск, 2003, с. 8–10.

⁶⁸ А. Л о с е в. Նշվ. աշխ., էջ 40–45:

⁶⁹ Н. Б е р д я е в. Кризис искусства. М., 1990, с. 3.

⁷⁰ Ա. Հ ո վ հ ա ն ն ի ի ու յ ա ն. նշվ. աշխ., էջ 364–377:

⁷¹ Культура Византии (вторая половина VII–XII в.). М., 1989, с. 192.

⁷² Н. К о н р а д. Литература Востока в средние века, с. 14.

⁷³ Հ. Է դ ո յ ա ն. Հին եգիպտական մեռյալների գիրքը (առաջաբանը), Երևան, 2004, էջ 36:

⁷⁴ Խոսքը գրական կամ առասպելական հերոսի անդրաշխարհ իջնելուն և վերադառնալուն է վերաբերում:

նեական որևէ հեղինակից կատարված բանաբառության, այլ համարում է ամբողջովին ինքնատիպ մտավոր հղացում: Ոճապատկերային առումով, սակայն, Դ. Ալիգիերին Պրոտորոմից խորը ազդեցություններ է կրել⁷⁵:

Վերածնությունը հայ իրականության մեջ անկասկած տեղական յուրահատկություններ ունի՝ այդ շարժմանը բնորոշ ընդհանրություններով հանդերձ: Հայկական Վերածնությունը ևս ենթադրում է դպրոցի ու գրականության աշխարհականացում, բնության և ճշգրիտ գիտությունների նորովի յուրացում, անձի ազատագրում բոլոր տեսակի արգելքներից, անտիկ ավանդների վերականգնում և այլն: Հայ իրականության մեջ Գրիգոր Նարեկացիով «իրապաշտությունը մուտք է գործում մեր իրականության մեջ, երբ դեռ Արևմուտքում գրական գեղեցիկը կաշկանդված էր իմացական և հոգեկան արգելքներով»⁷⁶: Մեզանում մարդը որոշակիորեն ազատվել էր դրանցից: Սակայն գեղագիտական առումով փաստը որևէ կերպ չէր արձանագրվել ու չէր ստացել իր բնորոշումը: Հովհաննես Իմաստասերի «Բան իմաստութեան»-ը ժամանակի պահանջն է: Վերածնության մի խորը գեղագիտական ընկալում է ընկած Վարդան Այգեկցու «Երկու նկարիչը» հանրահայտ առակի հիմքում ևս: «Թագաւոր ոմն շինեաց գեղեցիկ դարպաս և կամեցաւ նկարել գնա այնպիսի պատկերօք, որ այլ նմա ոչ լինէր...», - գրում է նա⁷⁷: Մի նկարիչ գեղեցիկ պատկերներ է նկարում, մյուսը՝ ուղորկում է պատը՝ որպէս հայելի: Ավարտելուց հետո հանում են վարագույրը, և լույսն ընկնում է կոկված պատի վրա ու երևան հանում գեղեցիկ պատկերները, որ կային հակառակ պատի վրա՝ մթնեցնելով այն: Թագավորն ասում է՝ այս քան զայն գեղեցիկ է⁷⁸: Մքանչելիորեն քննված է արվեստի արտացոլման մի տեսական դրույթ, ինչպես նախորդ դեպքում: Գրողը ցույց է տալիս, թե ինչպիսի սկզբունքներով կարող են իրականությունն արտացոլել արվեստի երկու տարբեր ստեղծագործություններ: Արվեստագետի հմտությունը լոկ նկարելը չէ, այլ արտացոլումն ընդհանրապես, երբ ամեն ինչ կրնդգրկվի գեղարվեստական ստեղծագործության մեջ: Մ. Արեղյանը հայկական Վերածնության «առաջին պուեստիկոս» է համարում Գրիգոր Մագիստրոսին՝ նկատի ունենալով նրա բացառիկ դերը XI դ. հայ կյանքում տեսական հարցերի առաջադրման և լուծման մեջ⁷⁹: Սակայն գործնականում այդ դերն ստանձնում է նրա հանճարեղ նախորդը՝ Գր. Նարեկացին: Իրականում, ինչպես պնդում է Հ. Ս. Թամրազյանը, Վաղ Վերածնությունը կամ նրա առաջին կարևորագույն փուլն ընդգրկում է X-XII դդ.⁸⁰: Հենց Գր. Նարեկացին է հեղաշրջում ողջ միջնադարյան հայ մշակույթը⁸¹՝ ազդելով նաև այլ բնագավառների վրա⁸²: Մագիստրոսը շարունակում է նրան՝

⁷⁵ Նույն տեղում, էջ 196:

⁷⁶ Գ յ ու ը թ ղ վ ը դ. Ք ի պ ա ը յ ա ն. Պատմություն հայ հին գրականության, Վենետիկ, Ս. Ղազար, 1992, էջ 375:

⁷⁷ Н. М а р р. Сборник притч Вардана. Ч. 1-2, СПб., 1899, с. 325.

⁷⁸ Նույն տեղում:

⁷⁹ Մ. Ա ը թ ղ յ ա ն. Երկեր, հ. Դ, էջ 34-37:

⁸⁰ Հ. Ս. Թ ա մ ը ը յ ա ն. Հայ քննադատություն, հ. Բ, էջ 36-37:

⁸¹ Մ. Մ կ ը յ ա ն. Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976, էջ 475: Լ. Շ ա ն թ. Երկեր, հ. 9, Բեյրութ, 1946, էջ 109-121:

⁸² Ն. Թ ա հ մ ի ղ յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայ երաժշտությունը V-XV դդ., էջ 5-13:

գաղափարական հող նախապատրաստելով հետագա արվեստագետների համար, իսկ Հովհաննես Իմաստասերը, «Բան իմաստութեան» պոեմով, գալիս է հաստատելու Վերածնության գաղափարները՝ նաև տեսականորեն ամրագրելով դրանք կյանքում և արվեստում: Նարեկացիագետ Պ. Խաչատրյանը գտնում է, որ եթե Մ. Աբեղյանը միայն Գրիգոր Նարեկացու տաղերն է համարում Վերածնության դրսևորում, ապա Մ. Մկրյանը «արդարացիորեն իր ուշադրությունը բնեռում է հատկապես «Մատյան ողբերգության» երկի վրա», մշակութային ավելի լայն հենք ընտրելով X դարում այդ իրողության հաստատման համար⁸³: XIII–XIV դդ. հայկական Վերածնությունն արտաքին ազդակների պատճառով անավարտ է մնում: Ճիշտ կլինի, սակայն, այդ ընդհատումը միայն արտաքին ազդակներով չպատճառաբանել: Այն մերձավոր կապերը, որ կան եվրոպական Վերածնության ու նրան նախորդող հայկականի միջև, խոսում են ընդհանրությունների, իրար լրացնելու, քան դրանք հակադրելու մասին:

Հայկական Վերածնության գոյության մասին վեճերն արդյունք են նաև այլ հանգամանքի⁸⁴, սակայն չպիտի խանգարեն ըստ արժանվույն գնահատելու դարաշրջանը, նրա ձեռքբերումները և իրական արժեքները: Ի վերջո, գրական և գեղագիտական գրեթե բոլոր ուղղություններն էլ հետագայում են ստացել իրենց տեսական բնութագրումները, ու եվրոպական Վերածնությունն ավելի ուշ է ուրակվել իբրև այդպիսին⁸⁵: Նախկինում (XIV–XV դդ.) այդ մասին այլ կերպ էին խոսում, և Վերածնություն ասվածն էլ մեկ այլ նշանակություն ուներ:

Վ. Ժիրմունսկու պնդմամբ՝ Արևելքի մանիքեականության դուալիստական ազդեցությունը, տարածված բազմաթիվ մոտիվներն ու սյուժեները Բյուզանդիայի վրայով անցան Արևմուտք՝ չնայած Թ. Բենֆեյի հնդկաբանության տեսության նահանջին⁸⁶: Հայտնի է, որ համաշխարհային երեք կրոնները ստեղծվեցին Արևելքում: Իսկ եվրոպական Վերածնությունն առանց աստվածաշնչյան մոտիվների ու աշխարհայացքային բաղադրատարրերի՝ անհնար է պատկերացնել: Այսօր հարկ է Վերածնության խնդրում խստագույնս կարևորել հայերի ու բյուզանդացի հույների դերակատարության հարցը՝ երբեք չըջանցելով նրանց: Նաև անընդունելի է կարծել, թե հայ մշակույթը չէր կարող լինել վերածնական, նախորդել թեկուզև եվրոպական Վերածնությանը՝ ինչ-ինչ նրբերանգներ հաղորդելով նրան: Իսկ այդ առիթով ասված Վ. Չալոյանի պահանջը, մեր համոզմամբ, ճշմարտացի է. «Հայկական Վերածնությունը պատմական այնպիսի նշանակալից երևույթ է, որ ոչ միայն չի կարելի անտեսել, այլև պետք է բացահայտել իր ողջ լիակատարությամբ և խորությամբ»⁸⁷:

⁸³ Պ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Մ. Էջմիածին, 1996, էջ 6–9:

⁸⁴ С. А в е р и н ц е в. Поэтика ранневизантийской литературы. М., 1977, с. 30–31. Նոր ժամանակներում Ալեքսանդր Բաումգարտենը (1714–1762) դեռևս չէր շրջանառել «էսթետիկա» (գեղագիտություն) եզրը և շատ խնդիրներ իրենց լուծումը չէին ստացել: Այն որոշակիորեն դժվար է կիրառել հենց միջնադարյան գրականության համար մեր ժամանակներում:

⁸⁵ А. Л о с е в. Նշվ. աշխ., էջ 37–38:

⁸⁶ В. Ж и р м у н с к и й. Народный героический эпос. М.–Л., 1962, с. 50–52.

⁸⁷ Վ. Չ ա լ ո յ ա ն. Հայկական ռենեսանս, էջ 7:

СОВРЕМЕННАЯ МЕДИЕВИСТИКА И ПРОБЛЕМА
АРМЯНСКОГО ВОЗРОЖДЕНИЯ

ՏԱՐԿԻՏ ՄԽԻՏԱՐՅԱՆ

Р е з ю м е

В X–XIV вв. в армянской культуре действительно существовало Возрождение. Оно имело свою внутреннюю логику и стадии развития: IX–X вв.– довозрождение; X–XII вв.– раннее возрождение; XIII–XIV вв.– Возрождение. Армянские и зарубежные ученые, создавшие и использовавшие эту теорию, систематизировали особенности армянского Возрождения, связывая его начало с разносторонними новшествами в произведениях Григора Нарекаци. Его продолжают и теоретически укрепляют новыми достижениями такие великие мыслители как Григор Магистрос, Оганес Имастасер Саркаваг и другие. Однако, очевидно и то, что армянское Возрождение осталось незавершенным. По теории А. Лосева, народы, начинающие Возрождение (как, например, итальянцы), его не завершают. Эта роль принадлежит новым народам. Следовательно, причины незавершенности Возрождения не только во внешнем влиянии, но и внутренние–эстетические.

CONTEMPORARY MEDIEVALISM AND THE PROBLEM
OF ARMENIAN RENAISSANCE

SARGIS MKHITARYAN

S u m m a r y

This article deals with an essential problem of Armenian medievalism–the period of Armenian Renaissance and the revelations of the peculiarities of its development in a new way. Disproving the approaches of the scholars who reject that theory, the author shows that the 10th–14th centuries have really been regenerating in Armenian culture. Our Renaissance has had its inner logic and stages of development: the 9th–10th centuries as pre-Renaissance, the 10th–12th centuries–early Renaissance, and the 13th–14th centuries as Renaissance. Armenian and foreign scholars who have developed and circulated the theory, have systematized the peculiarities of Armenian Renaissance relating to its origin in the works of Grigor Narekatsi and various novelties he has brought. He has been followed and strengthened with new theoretical achievements by other geniuses such as Grigor Magistros, Hovhannes Sarkavag and others. It is observed that Armenian Renaissance has been left incomplete. According to A. Losev's opinion people generating Renaissance (thus, for instance, the Italians) do not complete it, that role belongs to latter-day people. So the external impulses are not the only reason of incompleteness of Renaissance. There exist internal and aesthetic values, too.